ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Լոռի Բերդ **« 15 » հուլիսի 2024թ.**

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ԹԻՎ 8

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Կայացավ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024թ. հուլիսի 15-ին ժամը՝ 12:00-ին հրավիրված արտահերթ նիստը:

Նիստը ուղիղ հեռարձակվում է համայնքապետարանի պաշտոնական յութուբյան ալիքով և միաժամանակ հեռարձակվում է նաև համայնքապետարանի պաշտոնական ֆեյսբուքյան էջով:

Նիստին ներկա էին Լոռի Բերդ համայնքի ավագանու տասնմեկ անդամները, բացակա էին Իրինա Ներսեսյանը, Վանո Չատինյանը, Աննա Գրիգորյանը և Անի Սերոբյանը:

Նիստը վարեց՝ Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝ Արայիկ Ներսիսյանը:

Նիստը արձանագրեց՝ Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Անի Մարտիրոսյանը:

Համայնքի ղեկավար Ա. Ներսիսյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որտեղ տեղ էին գտել հետևյալ հարցերը.

Լսեցին՝

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Արայիկ Ներսիսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև 65-րդ հոդվածով՝

ավագանին որոշեց՝ Հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024թ. հուլիսի 15-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն ստորև ներկայացված տեսքի.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024թ. հուլիսի 15-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2024 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին Լոռի Բերդ համայնքի ղեկավարի հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին:

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը և հիմնական միջոցները մրցութային կարգով վարձակալության տրամադրելու նպատակով հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 23-ի թիվ 66-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու մշտական հանձնաժողովների կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 23-ի ԹԻՎ 67-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու մշտական հանձնաժողովների աշխատակարգը հաստատելու մասին:

6) Հայաստանի Հանրապետությանը հողամաս նվիրաբերելու մասին:

7) Հայաստանի Հանրապետությանը հողամաս նվիրաբերելու մասին:

8) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի զինանշանը հաստատելու մասին:

11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 44-Ա/

Համայնքի զինանշանը հաստատելու մասին հարցը համայնքի ղեկավարի առաջարկությամբ դուրս եկավ օրակարգից և առաջարկվեց քննարկել ավագանու հաջորդ նիստին, քանի որ բնակչության շրջանում բավականին ակտիվացել է հետաքրքրվածությունը զինանշանի հետ կապված: Ներկա պահին համայնքի աշխատակազմին է ներկայացվել համայնքի զինանշանի թվով չորս առաջարկ, առաջարկները կարող են այս օրերի ընթացքում ևս ավելանալ, ուստի՝ նպատակահարմարությունից ելնելով ու հնարավորինս շատ առաջարկներ քննարկելու նպատակով՝ համայնքի զինանշանի հաստատման հարցը թողնել ավագանու հաջորդ նիստի քննարկմանը:

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Արայիկ Ներսիսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ավագանին որոշեց՝ Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Լոռու մաարզի Լոռի Բերդ համայնքի 2024 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին Լոռի Բերդ համայնքի ղեկավարի հաղորդումը:

11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 45-Ն/

Հավելվածը կցվում է:

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 66-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. /Անի Մարտիրոսյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով՝

ավագանին որոշեց՝ Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը և հիմնական միջոցները մրցութային կարգով վարձակալության տրամադրելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Մրցույթի կազմակերպիչ և աճուրդավար - Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝ Արայիկ Ներսիսյան

Արձանագրող - Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Անի Մարտիրոսյան

Հանձնաժողովի անդամներ՝

համայնքապետարանի գլխավոր մասնագետ՝ Մարգարիտա Հովսեփյան

համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ՝ Լիլիթ Առաքելյան
ավագանու անդամ՝ Վարդումյան Հայկ Վազգենի
ավագանու անդամ՝ Պապյան Հարություն Միշիկի
ավագանու անդամ՝ Չատինյան Վանո Վալերի
ավագանու անդամ՝ Գևորգյան Միշիկ Մարտիկի
Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 23-ի թիվ 66-Ա որոշումը:

11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 46-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 67-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. / Անի Մարտիրոսյան /

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով, հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 12-ի թիվ 49-Ն որոշումը, ինչպես նաև հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը՝

ավագանին որոշեց՝ Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի մշտական հանձնաժողովների հետևյալ կազմերը.
1) Ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով
ավագանու անդամ՝ Պապիկյան Վահրամ Ռոմիկի
ավագանու անդամ՝ Չիբուխչյան Արման Հրաչիկի
ավագանու անդամ՝ Շահնազարյան Թամարա Էդիկի
ավագանու անդամ՝ Վերմիշյան Կարլեն Ջիվանի
ավագանու անդամ՝ Գևորգյան Միշիկ Մարտիկի
2) Մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով
ավագանու անդամ՝ Մարգարյան Սիլվա Ստեփանի
ավագանու անդամ՝ Ներսեսյան Իրինա Վազգենի
ավագանու անդամ՝ Սիմոնյան Անահիտ Բաբկենի
ավագանու անդամ՝ Գրիգորյան Աննա Հրայրի
ավագանու անդամ՝ Ասրյան Աննա Տիգրանի

3) Իրավական, քաղաքաշինության, հողօգտագործման և գյուղատնտեսության հարցերի մշտական հանձնաժողով

Համայնքի ղեկավար, ավագանու անդամ՝ Արայիկ Մենժիկի Ներսիսյան

ավագանու անդամ՝ Պապյան Հարություն Միշիկի

ավագանու անդամ՝ Վարդումյան Հայկ Վազգենի

ավագանու անդամ՝ Չատինյան Վանո Վալերի

ավագանու անդամ՝ Գևորգյան Միշիկ Մարտիկի

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 23-ի թիվ 67-Ա որոշումը:

11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 47-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. / Անի Մարտիրոսյան /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ ենթակետով, ինչպես նաև հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 12-ի թիվ 49-Ն որոշումը՝

ավագանին որոշեց՝ Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու մշտական հանձնաժողովների աշխատակարգը՝ ըստ ներկայացված տեսքի.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

1. Սույն աշխատակարգով (այսուհետ՝ կարգ) սահմանվում են Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու մշտական հանձնաժողովների (այսուհետ՝ Հանձնաժողով) աշխատակարգը:
2. Հանձնաժողովներից յուրաքանչյուրի անդամների թվաքանակը հավասար է 5-ի:
3. Հանձնաժողովների անդամների կազմը հաստատվում է Ավագանու որոշմամբ:
4. Հանձնաժողովների կազմից ընտրվում է հանձնաժողովի նախագահ:
5. Հանձնաժողովի նախագահի լիազորությունները դադարում են, եթե՝

1) Օրենքով սահմանված կարգով դադարել են նրա՝ որպես Ավագանու անդամի լիազորությունները.

2) նա տվել է հրաժարական:

Հանձնաժողովի նախագահը հրաժարականի մասին դիմումը ներկայացնում է Ավագանուն կամ համայնքի ղեկավարին, որն էլ այն հրապարակում է Ավագանու առաջիկա նիստում:

Հանձնաժողովի նախագահի թափուր տեղերը համալրվում են սույն կարգի 4-րդ կետով սահմանված կարգով:

6. Ավագանու անդամների՝ որևէ Հանձնաժողովին անդամակցելու հարցը լուծում է Ավագանին, որն էլ կարող է փոխել Հանձնաժողովներում ընդգրկված իր անդամներին՝ սույն կարգի 3-րդ կետում սահմանված կարգով:

7. Հանձնաժողովն ունի իր աշխատակարգը և իր անվամբ՝ սահմանված նմուշի ձևաթուղթ, որը հաստատվում է Հանձնաժողովի որոշմամբ:

8. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն կեցից ավելին և այն վարում է Հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նիստին ներկա տարիքով ավագ անդամը:

9. Ավագանու նիստի ընթացքում արգելվում է Հանձնաժողովի նիստի գումարումը:

10. Հանձնաժողովի նիստերը տեղի են ունենում Ավագանու նստավայրում: Այլ վայրում Հանձնաժողովի նիստ կարող է անցկացվել միայն Հանձնաժողովի որոշմամբ, որի մասին Հանձնաժողովի նախագահը նախապես տեղեկացնում է համայնքի ղեկավարին:

11. Հանձնաժողովի նիստերը դռնբաց են: Հանձնաժողովի նիստին կարող են մասնակցել նաև համայնքի ղեկավարը կամ պաշտոնակատարը, վարչական ղեկավարը (բնակավայրին վերաբերվող հացերի քննարկման ժամանակ)՝ խորհրդակցական ձայնի իրավունքով: Այն դեպքում, երբ նախաձեռնության հեղինակը համայնքի ղեկավարն է կամ համայնքում հաշվառված, տասնվեց տարին լրացած անձինք, ապա Հանձնաժողովների նիստերին կարող է ներկա գտնվել նաև նրանց ներկայացուցիչը: Հանձնաժողովի նիստին կարող է մասնակցել նաև նախաձեռնության հեղինակ Ավագանու անդամը (անդամները):

12. Գլխադասային Հանձնաժողովի կամ Հանձնաժողովների նիստերին կարող են մասնակցել նաև Ավագանու անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով և ներկայացնել առաջարկություններ քննարկվող հարցի վերաբերյալ:

13. Հանձնաժողովի հերթական նիստը սկսվում է օրակարգի հաստատումով, որի նախագիծը կազմում և նիստից առնվազն երկու օր առաջ Հանձնաժողովի անդամներին է տրամադրում Հանձնաժողովի նախագահը: Մինչև օրակարգի հաստատումը այլ հարցեր չեն քննարկվում:

14. Օրակարգի հաստատումից հետո Հանձնաժողովի հերթական նիստում հարցերը քննարկվում են հետևյալ հաջորդականությամբ՝

1) Հանձնաժողովի հերթական նիստը վարողը ըստ օրակարգի ներկայացնում է քննարկվող հարցը և դրա վերաբերյալ հիմնական ու հարակից զեկուցողներին.

2) հիմնական զեկուցողի ելույթը.

3) հարցեր հիմնական զեկուցողին.

4) հարակից զեկուցողի ելույթը.

5) հարցեր հարակից զեկուցողին.

6) մտքերի փոխանակություն.

7) նիստը վարողի եզրափակիչ ելույթը.

8) քվեարկություն:

15. Հանձնաժողովի նիստում յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկությունը կատարվում է առանձին՝ այդ հարցի քննարկման ավարտից անմիջապես հետո:

16. Քվեարկության է դրվում քննարկված հարցի վերաբերյալ Ավագանուն դրական եզրակացություն ներկայացնելու մասին առաջարկությունը: Եթե քվեարկության արդյունքում առաջարկությունը չի ընդունվում, ապա համարվում է, որ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը դրական եզրակացություն չի ներկայացրել:

17. Հանձնաժողովի որոշումներն (եզրակացությունները) ընդունվում են, եթե որոշմանը կողմ են քվեարկել Հանձնաժողովի նիստին ներկա Հանձնաժողովի անդամների մեծամասնությունը, բայց ոչ պակաս քան Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի մեկ քառորդը: Ձայների հավասարության դեպքում նիստը վարողի ձայնը վճռորոշ է:

18. Նիստի արձանագրությունը, որը ներառում է նաև Հանձնաժողովի նիստում քննարկված բոլոր հարցերի քվեարկությունների արդյունքներն ու Հանձնաժողովի եզրակացությունը՝ ստորագրում է Հանձնաժողովի նախագահը, ցանկության դեպքում նաև Հանձնաժողովի նիստին ներկա անդամները և ներկա գտնվող մյուս մասնակիցները:

19. Հանձնաժողովները կարող են անցկացնել համատեղ նիստեր, որտեղ որոշումները յուրաքանչյուր Հանձնաժողովի կողմից ընդունվում են առանձին-առանձին:

20. Հանձնաժողովի անդամը նիստին ներկայանալու անհնարինության դեպքում այդ մասին նախապես տեղյակ է պահում Հանձնաժողովի նախագահին:

21. Հանձնաժողովի արտահերթ նիստ գումարվում է անհետաձգելի քննարկում և որոշման ընդունում պահանջող հարցերի առկայության դեպքում - նրա նախագահի կամ անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ նախաձեռնողի սահմանած ժամկետում և օրակարգով, ինչպես նստաշրջանների ընթացքում, այնպես էլ՝ նստաշրջաններից դուրս: Արտահերթ նիստի հրավիրման և անցկացման կարգը սահմանվում է Հանձնաժողովի աշխատակարգով, իսկ հարցերը քննարկվում են սույն կարգի 15-19 կետերով նախատեսված ընթացակարգով, սակայն նախաձեռնողի սահմանած օրակարգով:

22. Հանձնաժողովն իր նիստին կարող է հրավիրել քննարկվող հարցին առնչվող համայնքապետարանի աշխատակազմի մասնագետներին:

23. Համայնքի ղեկավարը, աշխատակազմի քարտուղարը, համայնքի ենթակայության կազմակերպությունները Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի պահանջով Հանձնաժողովին են տրամադրում անհրաժեշտ փաստաթղթեր ու տեղեկանքներ, բացառությամբ՝ Օրենսդրությամբ նախատեսված գաղտնիք համարվող տեղեկությունների:

24. Հանձնաժողովի կազմակերպչական, փաստաթղթային, տեղեկատվական, վերլուծական և մասնագիտական գործունեությունն ապահովում է Հանձնաժողովի նախագահը՝ համայնքապետարանի աշխատակազմի աջակցությամբ: Աշխատակազմը Հանձնաժողովներին ապահովում է անհրաժեշտ աշխատանքային պայմաններով:

25. Հանձնաժողովի նախագահը՝

1) վարում է Հանձնաժողովի նիստերը.

2) գումարում է Հանձնաժողովի արտահերթ նիստ.

3) Հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում Հանձնաժողովի հերթական նիստի օրակարգի նախագիծը.

4) ստորագրում է Հանձնաժողովի որոշումները (եզրակացությունները) և գրությունները.

5) ներկայացնում է Հանձնաժողովն այլ անձանց հետ հարաբերություններում.

6) Հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում ստացված դիմում-բողոքները և Հանձնաժողովի ընդունած որոշման (եզրակացության) համաձայն՝ ընթացք տալիս դրանց.

7) համակարգում է Հանձնաժողովի աշխատանքները մյուս Հանձնաժողովների և համայնքապետարանի աշխատակազմի հետ.

8) համակարգում է աշխատանքային խմբի աշխատանքը.

9) իրականացնում է Հանձնաժողովի և սույն կարգով նախատեսված այլ լիազորություններ:

26. Հանձնաժողովի նախագահի բացակայության կամ նրա պաշտոնը թափուր լինելու դեպքում նրան փոխարինում է Հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:

11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 48-Լ/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. / Արայիկ Ներսիսյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ ենթակետով՝

ավագանին որոշեց՝ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լեջան բնակավայրի վարչական տարածքում գտնվող (հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գյուղ Լեջան, 1-ին փողոց, թիվ 2/2 հողամաս), համայնքային սեփականություն հանդիսացող՝ 06-038-0031-0003 կադաստրային ծածկագրով 0.56846 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ Լոռի Բերդ համայնքի Լեջան գյուղում դպրոցի նոր շենք կառուցելու նպատակով:

Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող հետագա գործառույթները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 49-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. / Արայիկ Ներսիսյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ ենթակետով՝

ավագանին որոշեց՝ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող (հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գյուղ Լոռի Բերդ, 1-ին փողոց, թիվ 2 հողամաս), համայնքային սեփականություն հանդիսացող՝ 06-044-0011-0058 կադաստրային ծածկագրով 0.70146 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ գյուղում դպրոցի նոր շենք կառուցելու նպատակով:
Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող հետագա գործառույթները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:
11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 50-Ա/

Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Մարգարիտա Հովսեփյանը ներկայացրեց 2024թ. վճարված սոցիալական օգնությունների և դրամական մրցանակների մասին հաղորդում՝ 25.06.2024-15.07.2024թթ. ժամանակահատվածի դրությամբ և 2024թ. տարեսկզբից.

2024թ վճարված սոց վճարների և դրամական մրցանակների մասին հաղորդում

Սոց. վճարի տեսակը	25.06.2024- 15.07.2024		2024թ.տարեսկզբից	
	Սոց. Վճար ստացած անձանց քանակը	Գումարը /հազ.դրամ/	Սոց. Վճար ստացած անձանց քանակը	Գումարը /հազ.դրամ/
Երեխայի ծննդյան կապակցությամբ	3	100,0	28	980,0
հուղարկավորության կազմակերպման համար	2	80,0	34	1 360,0
սոցիալական հատուկ արտոնություններ, այդ թվում	0	0	96	1830
նորակոչիկ զինվորի երդման արարողությանը մասնակցելու համար			6	240,0
Հավաքների մասնակցության համար			42	840,0
Այլ			6	240,0
Մայիսի 9-ի կապակցությամբ			1	100,0
Վերջին զանգի կապակցությամբ			41	410,0
Ընդամենը սոց վճար	5	180,0	158	4 170,0

Այլ մշակութային կազմակերպություններ նախահաշվով վճարված դրամական մրցանակներ	2	80,0	9	360,0

Նիստի փակում:

Ավագանու անդամներ՝

Ներսիսյան Արայիկ Մենժիկի

Վարդումյան Հայկ Վազգենի

Պապյան Հարություն Միշիկի

Պապիկյան Վահրամ Ռոմիկի

Չիբուխչյան Արման Հրաչիկի

Մարգարյան Սիլվա Ստեփանի

Սիմոնյան Անահիտ Բաբկենի

Շահնազարյան Թամարա Էդիկի

Վերմիշյան Կարլեն Ջիվանի

Գևորգյան Միշիկ Մարտիկի

Ասրյան Աննա Տիգրանի

Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝

Արայիկ Ներսիսյան _____

Նիստը արձանագրեց՝ Անի Մարտիրոսյանը _____

Կ.Տ.